# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

**ՀՀՍՊԳՀԱՊՁԲ-19/38 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով մարզական գույքի /N2/գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի**

**Մասնակցում էին՝**

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Գևորգ Լոռեցյան /գնահատող/ |
| Հանձնաժողովի անդամներ՝ | Հարություն Եղոյան /գնահատող/ |
| | Անահիտ Կարապետյան /գնահատող/ |
| | Լյովա Վարդանյան /բացող/ |
| | Ռաֆայել Հարությունյան /բացող/ |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Անուշ Մարգարյան |

**Հայտերի բացման և գնահատման մասին**

**1. Տեղեկատվություն ներկայացրած հայտերի մասին.**

1.1 Ս.թ. հոկտեմբերի 14-ին ժամը 11:00-ին էլեկտրոնային գնումների www.armeps.am կայքի միջոցով պետք է տեղի ունենար հայտերի բացման նիստը, սակայն գնահատող հանձնաժողովի բացող անդամները չեն կարողացել բացել ստացված հայտերը, վերջիններիս մոտ առաջադրանքի բացակայության պատճառով:

1.2 Հանձնաժողովը որոշեց նույն պահին հետադարձ կապով տեղեկացնել ՀՀ ֆինանսների նախարարությանը առաջացած խնդրի մասին և նիստը շարունակել այն կարգավորվելուց հետո՝ հաջորդ օրը, ժամը 11:00-ին:

**Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:**

**Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 15.10.2019թ. ժամը 11:00-ին**

1.3 Հանձնաժողովի բացող անդամների մոտ՝ էլեկտրոնային գնումների armeps համակարգում առկա էր հայտերի բացման առաջադրանքը, սակայն բացող անդամները կրկին չեն կարողացել բացել ստացված հայտերը, քանի որ հայտերի բացման կոճակը սեղմելուց հետո առաջանում է հղում, որ նշված գործողության համար բավարար իրավունքներ չկան:

1.4 Հանձնաժողովը որոշեց կրկին հետադարձ կապով տեղեկացնել ՀՀ ֆինանսների նախարարությանը, որ խնդիրը դեռ լուծված չէ և նիստը շարունակել այն կարգավորվելուց հետո՝ հաջորդ օրը, ժամը 14:00-ին:

**Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:**

**Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 17.10.2019թ. ժամը 14:00-ին**

1.5 Ս.թ. հոկտեմբերի 16-ին գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային հասցեին ՀՀ ՖՆ համապատասխան ստորաբաժանման կողմից ստացվել է հաղորդագրություն (կցվում է), որ համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող կազմակերպությունն ուսումնասիրելով խնդիրը տեղեկացրել է, որ հայտի բացման և գնահատման բնականոն ընթացքը համակարգում տեխնիկապես հնարավոր չէ իրականացնել, և քանի որ իրենց միջամտությամբ հայտերի մասին տեղեկատվությունը արդեն իսկ առկա է ARMEPS համակարգում և հասանելի է հանրության համար, առաջարկվել է հանձնաժողովին գնահատման գործընթացը շարունակել փաստաթղթային եղանակով:

1.6 Գնահատող հանձնաժողովը որոշեց հետևել ՀՀ ՖՆ-ի առաջարկին և շարունակել հայտերի գնահատման գործընթացը փաստաթղթային եղանակով:

**Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:**

**2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.**

2.1 ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված «ՀՀՍՊԳՀԱՊՁԲ-19/38» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| Հ/Հ | Մասնակիցների անվանումները | Էլ. հասցեները |
|---|---|---|
| 1 | <<Սապսան Թրեյդ>> ՍՊԸ | davitbalayan@gmail.com |
| 2 | <<Սպորտ Սիթի>> ՍՊԸ | sportcity-arm@yandex,ru |
| 3 | <<Էներջի Գրուպ>> ՍՊԸ | info@energygroup.am |
| 4 | <<Լուառ>> ՍՊԸ | kananyan0102@mail.ru |
| 5 | <<ՄԱՅԲԱՅՔ>> ՍՊԸ | avetisyan.hrach@gmail.com |
| 6 | <<Քնար Շին>> ՍՊԸ | qnarshin@mail.ru |
| 7 | Գևորգ Վասիլյան Ա/Ձ, <<Վանշին Գրուպ>> ՍՊԸ | gevorg-vasilyan@mail.ru, vanhingroup@mail.ru |

**3. Տվյալներ հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.**

3.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

**4. Տվյալներ յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.**

4.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

**5. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին**

5.1 <<Սապսան Թրեյդ>> ՍՊԸ-ի, <<Էներջի Գրուպ>> ՍՊԸ-ի, <<ՄԱՅՐԱՅՔ>> ՍՊԸ-ի և <<Քնար Շին>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

5.2 <<Լուառ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ 31-րդ չափաբաժնի, մասնավորապես՝ Հավելված 2 գնային առաջարկի արժեք սյունակում տառերով կամ թվերով նշված գումարը չի համապատասխանում է ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին:

5.3 <<Սպորտ Սիթի>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ Հավելված 1 դիմում-հայտարարության էլեկտրոնային թվային ստորագրությունը չի համընկնում Հավելված 2 գնային առաջարկի էլեկտրոնային թվային ստորագրության հետ:

5.4 Գևորգ Վասիլյան Ա/Ձ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ Հավելված 1 դիմում-հայտարարության մեջ Գևորգ Վասիլյան Ա/Ձ-ի իրական շահառուների մասին տվյալներում բացակայում է ներկայացված փաստաթղթի տեսակը:

**6. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.**

6.1 Մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

| Չափաբաժին | Անվանում | Նախահաշվային գինը, ՀՀ դրամ | Մասնակիցների անվանումները | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | <<Սապսան Թրեյդ>> ՍՊԸ | | <<Սպորտ Սիթի>> ՍՊԸ | | <<Էներջի Գրուպ>> ՍՊԸ | | <<Լուառ>> ՍՊԸ | | <<ՄԱՅՐԱՅՔ>> ՍՊԸ | | <<Քնար Շին>> ՍՊԸ | | Գևորգ Վասիլյան Ա/Ձ, <<Վանշին Գրուպ>> ՍՊԸ | |
| | | | Առաջարկված գները, ՀՀ դրամ | | | | | | | | | | | | | |
| | | | առանց ԱԱՀ | ներառյալ ԱԱՀ | առանց ԱԱՀ | ներառյալ ԱԱՀ | առանց ԱԱՀ | ներառյալ ԱԱՀ | առանց ԱԱՀ | ներառյալ ԱԱՀ | առանց ԱԱՀ | ներառյալ ԱԱՀ | առանց ԱԱՀ | ներառյալ ԱԱՀ | առանց ԱԱՀ | ներառյալ ԱԱՀ |
| 1 | Ծանրաձողի հենակ | 994000 | - | - | 400000 | 480000 | 749000 | 898800 | 644000 | 644000 | - | - | - | - | | |
| 2 | Ծանրամարտի հարթակ | 4900000 | - | - | - | - | - | - | 3500000 | 3500000 | - | - | - | - | | |
| 3 | Ծանրամարտի ձող-1 | 142000 | - | - | 97500 | 117000 | - | - | 102000 | 102000 | - | - | - | - | | |
| 4 | Ծանրամարտի ձող-2 | 162000 | - | - | 119333,33 | 143200 | - | - | 117000 | 117000 | - | - | - | - | | |
| 5 | Մարմնամարզական կամրջակ | 750000 | - | - | - | - | - | - | 540000 | 540000 | - | - | - | - | | |

| | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 6 | Կանոններ-1 | 2946000 | - | - | - | - | - | - | 2846000 | 2846000 | - | - | - | - | | |
| 7 | Կանոններ-2 | 3360000 | - | - | - | - | - | - | 3260000 | 3260000 | - | - | - | - | | |
| 8 | Կշռաքարեր | 54000 | - | - | 433333,33 | 520000* | - | - | - | - | - | - | - | - | | |
| 9 | Հանդբոլի գնդակներ | 1170000 | - | - | 617500 | 741000 | 930000 | 1116000 | 975000 | 975000 | - | - | - | - | | |
| 10 | Առանց շարժիչի հեծանիվներ-1 | 2960000 | - | - | - | - | - | - | - | - | 190833,33 | 229000 | - | - | | |
| 11 | Առանց շարժիչի հեծանիվներ-2 | 4310000 | - | - | - | - | - | - | - | - | 357500 | 429000 | - | - | | |
| 12 | Ճկասուսերի էլեկտրական բաճկոն | 774000 | - | - | - | - | - | - | 765000 | 765000 | - | - | - | - | | |
| 13 | Ճկասուսերի լար | 1770000 | - | - | - | - | - | - | 435000 | 435000 | - | - | - | - | | |
| 14 | Սուսերի շեղբեր-2 | 655000 | - | - | - | - | - | - | 645000 | 645000 | - | - | - | - | | |
| 15 | Մարմնամարզական պարան՝ մագլցման համար | 2080000 | - | - | 1066666,7 | 1280000 | 1490000 | 1788000 | 1520000 | 1520000 | - | - | - | - | | |
| 16 | Մագնեզիում | 2250000 | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | | |
| 17 | Հոկեյի մականներ-1 | 680000 | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | | |
| 18 | Հոկեյի մականներ-2 | 680000 | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | | |
| 19 | Հոկեյի մականնե-3 | 680000 | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | | |
| 20 | Դաշտային հոկեյի գնդակներ | 580000 | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | | |

| | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 21 | Հրաձգության մանրագնդակներ | 4800000 | - | - | - | - | | | 4200000 | 4200000 | - | - | - | - | | |
| 22 | Մարմնամարզական ներքնակներ | 3465000 | - | - | 2128500 | 2554200 | | | 2277000 | 2277000 | - | - | - | - | | |
| 23 | Մարմնամարզական նստարան | 3240000 | - | - | 2095200 | 2514240 | | | 2592000 | 2592000 | - | - | 987660 | 1185192 | 2430000 | 2430000 |
| 24 | Ատրճանակներ-1 | 48000 | - | - | - | - | | | - | - | - | - | - | - | | |
| 25 | Սպորտային փամփուշտ-1 | 350000 | - | - | - | - | | | - | - | - | - | - | - | | |
| 26 | Դարպասի ցանց | 32000 | - | - | 25000 | 30000 | | | - | - | - | - | - | - | | |
| 27 | Ֆուտբոլի դարպասներ | 470000 | - | - | 365000 | 438000 | | | 450000 | 450000 | - | - | - | - | | |
| 28 | Ժամացույցներ | 72000 | - | - | - | - | | | - | - | - | - | - | - | | |
| 29 | Սեղաններ | 650000 | - | - | 433333,33 | 520000 | | | - | - | - | - | - | - | 430000 | 430000 |
| 30 | Շախմատի քարեր | 120000 | - | - | 79166,67 | 95000 | | | - | - | - | - | - | - | | |
| 31 | Մարմնամարզական պատ | 3948000 | 2820000 | 3384000 | 2303000 | 2763600 | | | 2585000 | 2585000 | - | - | 841300 | 1009560 | 2914000 | 2914000 |
| 32 | Պտտաձող | 1740000 | - | - | 997500 | 1197000 | | | 1650000 | 1650000 | - | - | - | - | | |
| 33 | Ռետինե հատակ | 1592000 | - | - | 526666,67 | 632000 | | | 1400000 | 1400000 | - | - | - | - | | |
| 34 | Սեղանի թենիսի գնդակներ | 118000 | - | - | 88500 | 106200 | | | - | - | - | - | - | - | | |
| 35 | Վարժասարքեր-1 | 1076000 | - | - | 883333,33 | 1060000 | | | 1056000 | 1056000 | - | - | - | - | | |
| 36 | Սեղանի թենիսի ձեռնաթիակներ | 160000 | - | - | 115000 | 138000 | | | 130000 | 130000 | - | - | - | - | | |

| | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 37 | Սեղանի թենիսի սեղաններ | 840000 | - | - | 663333,33 | 796000 | | | 640000 | 640000 | - | - | - | - | | |
| 38 | Սեղանի թենիսի ցանց | 108000 | - | - | 55000 | 66000 | | | 96000 | 96000 | - | - | - | - | | |
| 39 | Վարժասարքեր-2 | 504000 | - | - | 330000 | 396000 | | | 480000 | 480000 | - | - | - | - | | |
| 40 | Վարժասարքեր-3 | 1920000 | - | - | 1441666,7 | 1730000 | | | 1860000 | 1860000 | - | - | - | - | | |
| 41 | Վարժասարքեր-4 | 1516000 | - | - | 1165000 | 1398000 | | | 1476000 | 1476000 | - | - | - | - | | |
| 42 | Վոլեյբոլի գնդակներ | 1344000 | - | - | 912000 | 1094400 | | | 787200 | 787200 | - | - | - | - | | |
| 43 | Վոլեյբոլի կանգնակ | 510000 | - | - | 410000 | 492000 | | | 456000 | 456000 | - | - | - | - | | |
| 44 | Վոլեյբոլի ցանց | 50000 | - | - | 30000 | 36000 | | | - | - | - | - | - | - | | |
| 45 | Մարզման ցատկացանցեր (բատուտ) | 4200000 | 3000000 | 3600000 | - | - | | | 3800000 | 3800000 | - | - | - | - | | |
| 46 | Շախմատ | 136000 | | | 103333,33 | 124000 | | | 90000 | 90000 | - | - | - | - | | |
| 47 | Սպորտային փամփուշտ-2 | 1800000 | | | - | - | | | - | - | - | - | - | - | | |
| 48 | Բադմինտոնի փետրավոր գնդակներ (վոլան) | 36000 | | | 30000 | 36000 | | | - | - | - | - | - | - | | |
| 49 | Փրկարարական բաճկոններ | 270000 | | | - | - | | | 260000 | 260000 | - | - | - | - | | |
| 50 | Փրկագոտի | 810000 | | | - | - | | | 780000 | 780000 | - | - | - | - | | |
| 51 | Ատրճանակներ-2 | 1296000 | | | - | - | | | - | - | - | - | - | - | | |
| 52 | Հրացան | 1836000 | | | - | - | | | - | - | - | - | - | - | | |

| | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 53 | Ֆուտբոլի գնդակներ | 2304000 | | | 1152000 | 1382400 | | | 1536000 | 1536000 | - | - | - | - | | |
| 54 | Գնդակներ-3 | 180000 | | | 90000 | 108000 | | | - | - | - | - | - | - | | |

* գնային առաջարկը գերազանցում է նախահաշվային գինը

**7. Գնահատման գործընթացի կասեցման վերաբերյալ.**

7.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.17թ թիվ 526-Ն որոշմամբ հաստատված ''Գնումների գործընթացի կազմակերպման'' կարգի 41-րդ կետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել <<Սպորտ Սիթի>> ՍՊԸ-ին և Գևորգ Վասիլյան Ա/Ձ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել 5-րդ կետով արձանագրված անհամապատասխանությունները:

**Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:**

**8. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին**

8.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ս.թ. հոկտեմբերի 22-ին ժամը 11:00-ին, ք. Երևան, Կառավարական տուն 2, 308 սենյակ հասցեում:

**Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:**

**Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 22.10.2019թ. ժամը 11:00-ին**

**Մասնակցում էին՝**

Հանձնաժողովի նախագահ՝ Գևորգ Լոռեցյան /գնահատող/

Հանձնաժողովի անդամներ՝ Հարություն Եղոյան /գնահատող/
Անահիտ Կարապետյան /գնահատող/
Լյովա Վարդանյան /բացող/
Ռաֆայել Հարությունյան /բացող/

Հանձնաժողովի քարտուղար՝ Անուշ Մարգարյան

**9. Գնման գործընթացի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին**

9.1 <<Սպորտ Սիթի>> ՍՊԸ-ն և Գևորգ Վասիլյան Ա/Ձ-ն սահմանված ժամկետում շտկել են գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները:

**Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:**

**10. Գնահատման գործընթացի կասեցման և բանակցությունների կազմակերպման վերաբերյալ.**

10.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշմամբ հաստատված ''Գնումների գործընթացի կազմակերպման'' կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը, կասեցնել գնահատման նիստը և հրավիրել <<Սպորտ Սիթի>> ՍՊԸ-ին 8-րդ չափաբաժնի համար հայտով ներկայացված գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների, հաշվի առնելով, որ վերջինիս հայտով ներկայացված գնային առաջարկը նշված չափաբաժնի համար գերազանցում է նախահաշվային գինը:

**Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:**

**11. Հանձնաժողովի հաջորդ /բանակցությունների/ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին**

11.1 Հանձնաժողովի հաջորդ բանակցությունների նիստը հրավիրել ս.թ. հոկտեմբերի 24-ին ժամը 11:00-ին, ք. Երևան, Կառավարական տուն 2, 308 սենյակ հասցեում:

**Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:**

**Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 24.10.2019թ. ժամը 11:00-ին**

**Մասնակցում էին՝**

Հանձնաժողովի նախագահ՝ Գևորգ Լոռեցյան /գնահատող/

Հանձնաժողովի անդամներ՝ Հարություն Եղոյան /գնահատող/

Անահիտ Կարապետյան /գնահատող/

Լյովա Վարդանյան /բացող/

Ռաֆայել Վարդանյան /բացող/

Հանձնաժողովի քարտուղար՝ Անուշ Մարգարյան

**Բացակայում էր՝** <<Սպորտ Սիթի>> ՍՊԸ-ի ներկայացուցիչը

**12. Գնման գործընթացին հայտ ներկայացրած մասնակիցների հետ միաժամանակյա բանակցությունների վարման մասին**

12.1 <<<Սպորտ Սիթի>> ՍՊԸ-ի ներկայացուցչի բացակայության պատճառով վերջինիս հայտով ներկայացված գինը 8-րդ չափաբաժնի համար թողնել անփոփոխ:

**Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:**

**13. Տվյալներ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.**

13.1 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը՝

**<u>Առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել՝</u>**

<<<Սպորտ Սիթի>> ՍՊԸ-ին՝ 1, 3, 9, 15, 22, 26, 27, 30, 32, 33, 34, 35, 36, 38, 39, 40, 41, 43, 44, 48, 53, 54-րդ չափաբաժինների համար;

<<Լուսո>> ՍՊԸ-ին՝ 2, 4, 5, 6, 7, 12, 13, 14, 21, 37, 42, 46, 49, 50-րդ չափաբաժինների համար;

<<ՄԱՅԲԱՅՔ>> ՍՊԸ-ին՝ 10, 11-րդ չափաբաժինների համար;

<<Քնար Շին>> ՍՊԸ-ին՝ 23, 31-րդ չափաբաժինների համար;

Գևորգ Վասիլյան Ա/Ձ-ին՝ 29-րդ չափաբաժնի համար;

<<Սապսան Թրեյդ>> ՍՊԸ-ին՝ 45-րդ չափաբաժնի համար;

**<u>Երկրորդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել՝</u>**

<<Լուառ>> ՍՊԸ-ին՝ 1, 3, 22, 27, 32, 33, 35, 36, 38, 39, 40, 41, 43, 45, 53-րդ չափաբաժինների համար;

<<<Սպորտ Սիթի>> ՍՊԸ-ին՝ 4, 23, 29, 31, 37, 42, 46-րդ չափաբաժինների համար;

<<Էներջի Գրուպ>> ՍՊԸ-ին՝ 9, 15-րդ չափաբաժինների համար;

**<u>Երրորդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել՝</u>**

<<Էներջի Գրուպ>> ՍՊԸ-ին՝ 1-ին չափաբաժնի համար;

<<Լուառ>> ՍՊԸ-ին՝ 9, 15-րդ չափաբաժինների համար;

Գևորգ Վասիլյան Ա/Ձ-ին՝ 23-րդ չափաբաժնի համար;

<<Սապսան Թրեյդ>> ՍՊԸ-ին՝ 31-րդ չափաբաժնի համար;

**<u>Չորրորդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել՝</u>**

<<Լուառ>> ՍՊԸ-ին՝ 23-րդ չափաբաժնի համար;

Գևորգ Վասիլյան Ա/Ձ-ին՝ 31-րդ չափաբաժնի համար;

**Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:**

13.2 Հաշվի առնելով սույն արձանագրության 5.2 կետը մերժել՝ <<Լուառ>> ՍՊԸ-ի հայտը 31-րդ չափաբաժնի համար հրավերով սահմանված պահանջներին չբավարարելու հիմքով:

**Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:**

13.3 Հաշվի առնելով սույն արձանագրության 12.1 կետը մերժել՝ <<Սպորտ Սիթի>> ՍՊԸ-ի հայտը 8-րդ չափաբաժնի համար հրավերով սահմանված պահանջներին չբավարարելու հիմքով:

**Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:**

13.4 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետը՝ գնման գործընթացը 8-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած՝ հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին հիմքով:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:***

13.5 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետը՝ գնման գործընթացը 16, 17, 18, 19, 20, 24, 25, 28, 47, 51, 52-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած՝ ոչ մի հայտ չի ներկայացվել հիմքով:

**14. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը.**

14.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների հայտով առաջարկված ապրանքի ամբողջական նկարագրերը և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից համապատասխան եզրակացությունը ստանալու օրվանից հաշված մինչև տաս աշխատանքային օրվա ընթացքում, ժամը 11:00-ին, ք. Երևան, Կառավարական տուն 2, 303 սենյակ հասցեում:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:***

**Գնահատող հանձնաժողով՝**

------------------------------ Գ. Լոռեցյան /նախագահի/

------------------------------ Հ. Եղոյան

------------------------------ Ա. Կարապետյան

------------------------------ Լ. Վարդանյան

------------------------------ Ռ. Հարությունյան

------------------------------ Ա. Մարգարյան /քարտուղար/